ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО

YEREVAN STATE UNIVERSITY
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia

sss@ysu.am, www.sss.ysu.am, www.ysu.am

№ _____ «____»_____2012 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (2011-2012 ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ)

2011-2012 ուստարում Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈՒԳԸ) իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող միջոցառումներ, սատարել է ուսանողության գիտական և կրթական նախաձեռնություններին, նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

ՈՒԳԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՊՀ ՈՒԳԸ ղեկավար մարմինը ՈՒԳԸ Գիտական խորհուրդն է, որի կազմում են ԵՊՀ ՈՒԳԸ նախագահը, փոխնախագահը, քարտուղարը, մշտական հանձնաժողովների ղեկավարներն ու ֆակուլտետային ՈՒԳԸ-ների նախագահները:

ԵՊՀ ՈՒԳԸ ստորաբաժանումները եւ նրանց անդամների թիվը 2012թ. հունիսի 20-ի դրությամբ

Ստորաբաժանումը	*Անդամների թիվը*
ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական խորհուրդ	25
Մշտական հանձնաժողովներ	83
այդ թվում՝ աշխատակազմ	32
Արտաքին կապերի հանձնաժողով	20
Տեղեկատվական հանձնաժողով	31
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ	60
Ֆակուլտետային ՈՒԳԸ-ներ	233
Ընդամենը	***401***

ՈՒԳԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2011-2012 ուստարում ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված միջոցառումների տեսակային ցանկը.

Միջոցառման բնույթը	*Քանակը*
Հանրապետական և միջբուհական գիտաժողով	25
Ֆակուլտետային գիտաժողով	24
Ուսուցողական ծրագիր-դասընթաց	1
Սեմինար-քննարկում, կլոր սեղան, հանդիպում- դասախոսություն, ֆիլմի դիտում	154
Օլիմպիադա	8
Գիտաճանաչողական էքսկուրսիաներ	42
Դասախոսություններ դպրոցներում	9
Ինտելեկտուալ խաղ, բանավեճ, դատախաղ և մրցութային այլ միջոցառումներ	48
Այլ (դերային խաղ, ցուցահանդես, դպրոցականների այցեր ԵՊՀ և այլն)	28
Այլ կառույցների հետ համատեղ կազմակերպված միջոցառումներ	22
ԸՆԴԱՄԵՆԸ	***361***

ա) Հանրապետական և միջբուհական գիտաժողով

- «ՀՀ և ԼՂՀ. արդի մարտահրավերներ և զարգացման հեռանկարներ» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով՝ նվիրված ՀՀ և ԼՂՀ անկախությունների 20-ամյակներին (Պատմության ֆակուլտետ, 14.09.2011),
- Սոցիոլոգիայի ֆակուլտետի 7-ամյակին և Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի 25-ամյակին նվիրված միջբուհական ուսանողական գիտաժողով (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 14.11.2011),
- «Հղիության արհեստական ընդհատման բժշկաիրավական ասպեկտները» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Իրավագիտության ֆակուլտետի և Երևանի պետական բժշկական համալսարանի ՈՒԳԸ-ներ, 16.11.2011),
- «Սփյուռքի հիմնախնդիրները և սփյուռքահայ երիտասարդությունը» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ և Սփյուռքահայ ուսանողների խորհուրդ, 22-23.11.2011),
- «Համաշխարհային պատմության հիմնախնդիրները» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ և Համաշխարհային պատմության ամբիոն, 23.11.2011),
- «Կենսաբանության արդի խնդիրները» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Կենսաբանության ֆակուլտետ, 29-30.11.2011),
- «Նոր աշխարհ, նոր փիլիսոփայություն» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 02.12.2011),

- «ՀՀ իրավահամակարգի արդի վիճակը, խնդիրներն ու զարգացման միտումները» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Իրավագիտության ֆակուլտետ, 19.12.2011),
- «Գրական հանգրվաններ» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Հայ բանասիրության ֆակուլտետ, 05-06.03.2012),
- «Ֆրանսիան և Հարավային Կովկասը» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 05-06.03.2012),
- «Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Հայ բանասիրության ֆակուլտետ, 14.03.2012),
- «Հայ մշակույթի Ոսկեդարը» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Պատմության և Հայ բանասիրության ֆակուլտետներ, 04.04.2012),
- «1980թ. «Ապրանքների միջազգային առուծախի պայմանագրերի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Իրավագիտության ֆակուլտետ, 19.04.2012),
- Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողով (ՈՒԳԸ Գիտական խորհուրդ, 23-25.04.2012),
- Հնագիտաազգագրական երիտասարդական 1-ին հանրապետական գիտաժողով (Պատմության ֆակուլտետ, 02-03.05.2012),
- «Արցախյան հիմնախնդիրը» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Պատմության և Սոցիոլոգիայի ֆակուլտետներ, 31.05.2012),
- «ՀՀ օրենսդրության արդի վիճակն ու զարգացման միտումները» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողով (Իրավագիտության ֆակուլտետ, 31.05.-01.06.2012),
- «Կենսաբանության զարգացման ժամանակակից միտումները» խորագրով հանրապետական ուսանողական գիտաժողով՝ նվիրված ավստրիացի բնագետ Գրեգոր Մենդելի 190-ամյակին (Կենսաբանության ֆակուլտետ, 19.06.2012) և այլն:

բ) Ֆակուլտետային գիտաժողով

- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի 20-ամյակին նվիրված գիտաժողով (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ և ՈՒԽ, 22.11.2011),
- «Հայության հարատևման գրավականները և արդի մարտահրավերները» խորագրով գիտաժողով (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 24.11.2011),
- «Սերվիսի և զբոսաշրջության դերն ու նշանակությունը հասարակական կյանքի կազմակերպման մեջ» խորագրով գիտաժողով (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 21-22.12.2011),
- «Ռադիոֆիզիկայի արդի խնդիրները» խորագրով գիտաժողով (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, 07.03.2012),
- «Ռադիոֆիզիկայի արդի մարտահրավերները» խորագրով գիտաժողով (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, 12.04.2012),

- Մշակութաբանական 4-րդ գիտաժողով (Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ և Մշակութաբանության ամբիոն, 20.04.2012),
- Ֆակուլտետային ուսանողական գիտական նստաշրջան (Քիմիայի ֆակուլտետ, 26.04.2012),
- «Ժամանակակից հայոց լեզուն և լեզվաբանությունը» խորագրով գիտաժողով (Հայ բանասիրության ֆակուլտետ, 07.05.2012),
- «Հայոց լեզվի պատմության հիմնահարցեր» խորագրով գիտաժողով (Հայ բանասիրության ֆակուլտետ, 10.05.2012),
- «Հայ գրատպության 5 դարեր» խորագրով գիտաժողով (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետ, 11.05.2012),
- «Լեզվի և գրականության աշխարհում» խորագրով գիտաժողով (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 15.05.2012) և այլն:

ԵՊՀ ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված գիտաժողովների ընթացքում հնչել է շուրջ 700 գիտական զեկուցում, ընդ որում՝ մոտ 40 ուսանողներ զեկուցումներ են ներկայացրել ոչ իրենց ֆակուլտետում անցկացված գիտաժողովում: Շուրջ 20 անգամ ՈՒԳԸ անդամներն ունկնդրել են կայացած գիտնականների՝ գիտաժողովներում ունեցած ելույթները՝ հանդես գալով սուր հարցադրումներով, և մասնակցել են կլոր սեղան-քննարկումների՝ ներկայացնելով սեփական կարծիքները: ՈՒԳԸ անդամները մասնակցել են նաև նմանօրինակ գիտաժողովների. մասնավորապես Մ. Մալխասյանը 2011թ. դեկտեմբերի 13-ին զեկուցմամբ հանդես է եկել Երևանի պատմության հիմնախնդիրներին նվիրված 3-րդ հանրապետական գիտաժողովում, իսկ 2012թ. ապրիլի 28-ին՝ «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական կրթական 3-րդ գիտաժողովում:

գ) Ուսուցողական ծրագիր-դասընթաց

«Գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցում».

- «Գիտական աշխատանքներ կատարելու հիմնական սկզբունքները» խորագրով 1-ին սեմինար (սեմինարավար՝ պ.գ.դ., պրոֆ. Հայկազ Հովհաննիսյան, 02.03.2012),
- «Գիտական աշխատանքներ կատարելու հիմնական սկզբունքները» խորագրով 2-րդ սեմինար (սեմինարավարներ՝ ԵՊՀ պրոռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ. գ.դ., պրոֆ. Գեղամ Գևորգյան, ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆիզմաթ. գ.դ., պրոֆ. Ռոլանդ Ավագյան, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆ. Էմիլ Գևորգյան, 03.04.2012),
- «Ինչպես գրել գիտական աշխատանք» գիտահանրամատչելի հոդվածի հրատարակում ՈՒԳԸ նախագահ Մ. Մալխասյանի կողմից (տե՛ս «Երևանի համալսարան» ամսաթերթ, Երևան, 2012, թ. 3, էջ 14):
- «Գիտական աշխատանքներ կատարելու հիմնական սկզբունքները» խորագրով ֆակուլտետային սեմինարներ (սեմինարավարներ՝ տվյալ ֆակուլտետի մասնագետ, մարտ-մայիս, 2012):

դ) Սեմինար-քննարկում, կլոր սեղան

- Հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ուսանողներն ընդդեմ աղանդների» թեմայով սեմինար-քննարկում (04.10.2011),
- Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Պետության և իրավունքի փոխհարաբերակցությունը» թեմայով սեմինար-քննարկում (05.10.2011),
- Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «ՀՀ քրեական դատավարության նոր հայեցակարգում տուժողի իրավական կարգավիճակի խնդիրները» թեմայով սեմինար-քննարկում (09.10.2011),
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ինչո՞ւ է անհրաժեշտ գումար ծախսել կրթության վրա» թեմայով սեմինար-քննարկում (14.10.2011),
- Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Վորոնոյի դիագրամը կետերի, շրջանների և հատվածների համար» թեմայով սեմինար-քննարկում (19.10.2011),
- Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ֆրիտյոֆ Նանսեն-150» թեմայով սեմինար (09.11.2011),
- Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Թվային տեսաազդանշանների սեղմման ստանդարտներ. սեղմման հիմնական սկզբունքը» թեմայով սեմինար-քննարկում (23.11.2011),
- Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ինչպես գրել ռեֆերատ» թեմայով սեմինար (29.11.2011),
- Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ցեղասպանության կանխատեսում և կանխարգելում» թեմայով սեմինար-քննարկում (09.12.2011),
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ի՞նչ է պատմում ձեր ձեռագիրը ձեր մասին» թեմայով սեմինար-քննարկում (09.12.2011),
- Ռուս բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է Միխայիլ Լոմոնոսովին նվիրված կլոր սեղան (18.01.2012),
- ՈՒԳԸ Գիտական խորհուրդը կազմակերպել է **«**Համալսարանականների դերը Արցախյան գոյամարտում**»** խորագրով սեմինար-քննարկում, որը վարել են ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆ. Էդիկ Մինասյանը, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Արտավազդ Դարբինյանը և «Վարդանանք» ՌՀԴ ակումբի նախագահ Սաթենիկ Աբրահամյանը (30.01.2012),
- Հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Գրադարաններն ու ընթերցասրահները ուսանողների կյանքում» թեմայով սեմինար-քննարկում (13.02.2012),
- Հայ բանասիրության և Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետների ՈՒԳԸ-ները կազմակերպել են «Էպոսների խաչմերուկում» թեմայով սեմինար-քննարկում (24.02.2012),
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ռասայական խտրականություն» թեմայով սեմինար-քննարկում (27.02.2012),
- Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Թուրք-քրդական հարաբերությունները և ՀՀ-ը» թեմայով սեմինար-քննարկում (06.03.2012),

- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Հանրային կառավարման էությունը» թեմայով սեմինար-քննարկում (14.03.2012),
- Աստվածաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Թվերի խորհրդաբանությունը Եվագրոս Պոնտացու մատենագրության մեջ» թեմայով սեմինար-քննարկում (20.03.2012),
- Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է **«**Կնոջ դերը հայ իրականության մեջ**»** խորագրով սեմինար-քննարկում (21.03.2012),
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Էթիկան և էթիկետը՝ որպես արտաքին քաղաքականության որոշիչներ» թեմայով սեմինար-քննարկում (23.03.2012),
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ժեստերի լեզուն միջազգային քաղաքական ասպարեզում» թեմայով սեմինար-քննարկում (05.04.2012),
- Կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Հատուկ կարիքներով երեխաների ինտեգրումը հասարակության մեջ» թեմայով սեմինար-քննարկում (06.04.2012),
- Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է Անտուան էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» ստեղծագործության փիլիսոփայական և հոգեբանական վերլուծությամբ կլոր սեղան (12.04.2012),
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Ֆրանսիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում» թեմայով սեմինար-քննարկում (16.04.2012),
- Քիմիայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Սեր, սիրո քիմիա» և «Չբերությունը դատավճիռ չէ» թեմաներով սեմինար-քննարկում (16.04.2012),
- Հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Հրաչյա Աճառյանի կյանքը, գործունեությունը և գիտական ժառանգությունը» թեմայով սեմինար-քննարկում (18.04.2012),
- Կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Հաշմանդամների խնդիրները ՀՀ-ում» թեմայով սեմինար-քննարկում (20.04.2012),
- Ռադիոֆիզիկայի, Հայ բանասիրության ու Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ՈՒԳԸ-ները կազմակերպել են «Կիրառական լեզվաբանության խնդիրները» թեմայով սեմինար-քննարկում (20.04.2012),
- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Միկրոալիքային ֆոտոնիկա և ազդանշանների մշակում» թեմայով միջբուհական սեմինար (23.04.2012),
- Ռուս բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է ռուս անվանի գրող Ֆյոդոր Դոստոևսկուն նվիրված կլոր սեղան (25.04.2012),
- Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է «Օտարաբանություններ և նորաբանություններ» թեմայով սեմինար-քննարկում (11.05.2012) և այլն:

ե) Հանդիպում-դասախոսություն

- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում փ.գ.դ., պրոֆ. Հենզել Մանուչարյանի հետ, ով ներկայացրել է Հայկական հարցը 21-րդ դարում (07.11.2011),
- Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի օգնական Ռուստամ Մահմուդյանի հետ, ով ներկայացրել է անձի իրավական կարգավիճակի հիմունքները (11.11.2011),
- Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում հունգարացի ազգագրագետ Ագներ Էրոսի հետ, ով դասախոսություն է ներկայացրել աշխարհագրական տեղանունների և դրանց սիմվոլային նշանակության մասին (09.12.2011),
- Կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում Կարեն Թռչունյանի հետ, ով ներկայացրել է էներգետիկ անվտանգության հիմնահարցերը ՀՀ-ում (02.03.2012),
- ՈՒԳԸ Գիտական խորհուրդը կազմակերպել է հանդիպում ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի վիրտուալ հայագիտության լաբորատորիայի վարիչ, պ.գ.թ. Միեր Հովհաննիսյանի հետ, որի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել ինստիտուտի հայագիտական կայքերը ՈՒԳԸ-ի աջակցությամբ համալրելու վերաբերյալ (14.03.2012),
- Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում հուշարձանագետ Սամվել Կարապետյանի հետ (15.03.2012),
- Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ. Բաբկեն Հարությունյանի հետ, ով ներկայացրել է 1920թ. Ալեքսանդրապոլի և 1921թ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերին նվիրված «Բախտորոշ պայմանագրեր» խորագրով դասախոսությունը (19.03.2012),
- Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում Վաշինգտոնի համալսարանի դասախոս Դայինա Էգլիտիսի հետ, ով ներկայացրել է ամերիկյան կրթական համակարգում կիրառվող ուսուցման հիմնական մեթոդները (26.03.2012),
- Կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում կ.գ.դ. Էվրիկ Աֆրիկյանի հետ, ով ներկայացրել է մանրէաբանության արդի խնդիրները ՀՀ-ում (13.04.2012),
- Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում ֆակուլտետի դեկան, փ.գ.թ., դոց. Ալեքսան Բաղդասարյանի հետ, ով ներկայացրել է՝ ինչ է գրագողությունը, և ինչպես պետք է խուսափել չգիտակցված գրագողությունից (03.05.2012) և այլն:

զ) Գիտահանրամատչելի և գեղարվեստական ֆիլմերի դիտում

- «Երկրագնդի թոքերը» (Կենսաբանության ֆակուլտետ, 19.09.2011),
- «Քաղցկեղը և դու» (Կենսաբանության ֆակուլտետ, 28.09.2011),
- «Մաթեմատիկոսը և սատանան» (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, 29.09.2011),

- «Ծխելու իմաստը» (Կենսաբանության ֆակուլտետ, 21.10.2011),
- «Որս թաքնված համաչափության հետևից» (Ֆիզիկայի ֆակուլտետ, 07.11.2011),
- «Էրին Բրոկովիչ» (Իրավագիտության ֆակուլտետ, 25.11.2011),
- «Դոպինգի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա» (Կենսաբանության ֆակուլտետ, 28.11.2011),
- «Գաղտնիք» (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 29.11.2011),
- «Էկոլոգիական արտադրանքներ» (Քիմիայի ֆակուլտետ, 09.12.2011),
- «Գերնոր աստղեր» (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, 23.02.2012),
- «Ամուսնալուծություն» (Արևելագիտության ֆակուլտետ, 06.03.2012),
- «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպության մասին գիտահետազոտական ֆիլմ (Աստվածաբանության ֆակուլտետ, 04.04.2012),
- «Այցելուն» (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 05.04.2012),
- «Սիրո գաղտնիքը» (Քիմիայի ֆակուլտետ, 16.04.2012),
- «Աղետ» (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 18.04.2012),
- «Արտույտների ագարակը» (Արևելագիտության ֆակուլտետ, 25.04.2012),
- «Երկրորդ հնարավորություն» (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 28.04.2012),
- «Աննա Կարենինա», մաս 1, 2 (Ռուս բանասիրության ֆակուլտետ, 08.05.2012) և այլն:

է) Օլիմպիադա

- Կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է կենսաբանության ներֆակուլտետային օլիմպիադա (20.12.2011),
- Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է արևելյան լեզուների (արաբերեն, պարսկերեն, թուրքերեն) ներֆակուլտետային օլիմպիադա (20.03.2012),
- Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է մաթեմատիկայի միջբուհական օլիմպիադա (05.05.2012),
- Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է դիվանագիտության, քաղաքագիտության և հանրային կառավարման խնդիրներին նվիրված ներֆակուլտետային օլիմպիադա (10.05.2012) և այլն:

ը) Գիտաճանաչողական էքսկուրսիա

- Հանքավան և Ծաղկաձոր (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ, 24.09.2011),
- Բնության պետական թանգարան (Կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ, 01.10.2011),
- Արագածի Կոսմիկ ճառագայթների հետազոտման ինստիտուտ (Ֆիզիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ, 30.10.2011),
- Պռոշյանի գինու և կոնյակի գործարան (Քիմիայի ֆակուլտետի ՈՒԳԸ, 11.11.2011),
- Հովսեփ Օրբելու անվան ինստիտուտ (Քիմիայի ֆակուլտետի ՈՒԳԸ, 22.11.2011),

- Երկրաբանական թանգարան (Կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ, 17.02.2012),
- Մատենադարան (Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ, 15.03.2012),
- Սբ. Էջմիածին, որտեղ ՈՒԳԸ Գիտական խորհրդի անդամները հանդիպել են Գևորգյան հոգևոր ճեմարանի ղեկավարության և գիտակրթական ակտիվություն ցուցաբերող ուսանողների հետ (ՈՒԳԸ Գիտական խորհուրդ, 16.03.2012),
- Մատենադարան (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ, 24.03.2012),
- Երկրաբանական թանգարան (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ, 04.04.2012),
- ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության և գենետիկայի ինստիտուտ (Կենսաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ, 17.04.2012),
- Աշտարակ, Մուղնի, Հովհաննավանք, Սաղմոսավանք (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ, 22.04.2012),
- Մուղնի, Հովհաննավանք, Սաղմոսավանք (ՈՒԳԸ աշխատակազմ, 27.05.2012) և այլն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

2012թ. ապրիլի 9-ից 13-ը ՈՒԳԸ նախագահ Մ. Մալխասյանը մասնակցել է Մոսկվայի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Լոմոնոսով-2012» միջազգային երիտասարդական գիտական համաժողովին: Մ. Մալխասյանն այնտեղ մասնակցել է ԱՊՀ երկրների երիտասարդ գիտնականների խորհրդի համագումարի աշխատանքներին: Նա նաև դիտորդի կարգավիճակով և խորհրդատվական ձայնի իրավունքով մասնակցել է ՈՒԳԸ-ների համառուսաստանյան համագումարին՝ հանդես գալով ընդգրկուն զեկուցմամբ՝ ներկայացնելով ԵՊՀ ՈՒԳԸ կանոնադրությունը, նպատակներն ու առկա խնդիրները, ռազմավարությունն ու վերջին շրջանում կյանքի կոչված ամենահիշարժան միջոցառումները:

Համաժողովի շրջանակներում 5 երկկողմ և 1 եռակողմ համաձայնագրեր են ստորագրվել ԱՊՀ մի քանի բուհերի ուսանողական կառույցների և ԵՊՀ ՈՒԳԸ-ի միջև, որոնց թվում.

1. **Մոսկվայի պետական համալսարանի ուսանողական միության հետ** (նախկինում միշտ համագործակցություն եղել է այս բուհի հետ, սակայն դեռ համաձայնագիր չէր կնքվել):
2. **Ղազախստանի Իլյա Ժանսուգուրովի անվան ժետիսուսի պետական համալսարանի ուսանողական միության հետ:**
3. **Կիևի ազգային համալսարանի ուսանողական պառլամենտի հետ** (այս համալսարանի ՈՒԳԸ-ի հետ արդեն կնքվել էր նմանօրինակ պայմանագիր):
4. **Իրավաբանական միջազգային ինստիտուտի Աստրախանի մասնաճյուղի ՈՒԳԸ-ի հետ** (այս համաձայնագրի կնքումը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ այնտեղ հայկական մեծ համայնք կա):
5. **Կուրսկի պետական համալսարանի երիտասարդ գիտնականների խորհրդի հետ** (այս համաձայնագրի կնքումը միտված է ասպիրանտների հնարավորությունների ընդլայնմանը):
6. **Եռակողմ համաձայնագիր ժետիսուսի պետական համալսարանի, Սանկտ Պետերբուրգի պետական պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական միությունների և ԵՊՀ ՈՒԳԸ-ի միջև** (այս համաձայնագրի արդյունքում ուսանողները հնարավորություն կստանան առավել ակտիվորեն մասնակցելու տեխնիկական գիտություններին առնչվող միջազգային միջոցառումներին):

«Լոմոնոսով-2012» գիտաժողովին մասնակցել է նաև Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի մագիստրանտ Լեյլի Ալեքսանյանը:

2012թ. ապրիլի 26-ից 29-ը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ անդամ Գոռ Ալեքսանյանը ՌԴ Պերմ քաղաքում մասնակցել է «Երկրաբանությունը զարգացող աշխարհում» խորագրով միջազգային գիտաժողովին, և իր բաժանմունքում նրա զեկուցումը ճանաչվել է լավագույնը: Գ. Ալեքսանյանը տեղում կապեր է հաստատել Պերմի պետական ազգային հետազոտությունների համալսարանի ուսանողական կառույցների ղեկավարության հետ:

Ուսումնական տարվա մեկնարկին՝ սեպտեմբերի 10-ից 17-ը, ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Հայկ Ալեքսանյանը և ՈՒԳԸ անդամներ Անուշ Մարտիրոսյանն ու Դավիթ Կարագուլյանը Ծաղկաձորում մասնակցել են «Հարմոնիկ անալիզ և մոտարկումներ-5» միջազգային գիտաժողովին:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ԵՊՀ ՈՒԳԸ նախաձեռնությամբ և ջանքերով ֆակուլտետներում պարբերաբար նշվել են մասնագիտական տոները:
- Ստեղծվել է ԵՊՀ ՈՒԳԸ-ի համացանցային նոր կայք (հասցե՝ www.sss.ysu.am): Կայքի միջոցով ուսանողները կարող են ծանոթանալ ԵՊՀ ՈՒԳԸ նպատակներին, գործառույթներին, կառուցվածքին, տեղեկանալ ՈՒԳԸ-ի կազմակերպած միջոցառումներին և գործունեությանը:
- ԵՊՀ ՈՒԳԸ գործուն աջակցությամբ ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, Գևորգյան հոգևոր ճեմարանի, Սևանի Վազգենյան դպրանոցի կողմից կազմակերպված գիտաժողովներին ու սեմինար-քննարկումներին: Միևնույն ժամանակ ապահովվել է վերը նշված բուհերի ուսանողների մասնակցությունը ԵՊՀ ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված գիտաժողովներին:
- 2011-12 ուստարվա հրատարակչական հիմնական ձեռքբերումը ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուի պարբերական հրատարակությունն է:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Հոդվածների ժողովածու	Հոդված	Զեկուցումների թեզիսների ժողովածու	Զեկուցումների թեզիս
-	4	3	124	1	12

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ժամկոչյան Ա., Պապյան Ա., Սիմավորյան Ա., Գալստյան Դ., Բաղալյան Է., Մարտիրոսյան Ս., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները, «Նորավանք» ԳԿՀ հրատ., Երևան, 2011, 184 էջ:
2. *Մալխասյան Մ. Ա.,* Օշական (2-րդ, լրամշակված հրատարակություն), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Էջմիածին, 2012, 88 էջ:
3. *Տ. Արարատ քհն. Պողոսյան,* Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մատենագիտությունը, «Էջմիածին» ամսագիր 1970-2010, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Էջմիածին, 2011, 210 էջ:
4. *Տ. Արարատ քհն. Պողոսյան,* «Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը 1974-2008, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Էջմիածին, 2012, 481 էջ:

Հոդվածների ժողովածու

1. «Հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու»՝ նվիրված ԵՊՀ պատմության ֆակուլտետի 90-ամյակին, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 268 էջ (44 հոդված):
2. «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», մաս Ա (հասարակական գիտություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 358 էջ (44 հոդված):
3. «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», մաս Բ (հասարակական գիտություններ). Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 72 էջ (8 հոդված):

Հոդված (ՈՒԳԸ-ի ժողովածուներից դուրս ՈՒԳԸ անդամների կողմից հրատարակված)

ա) Հասարակական գիտություններ

1. *Հարությունյան Խ. Ա.,* Բառգիրք հայոց, «Էջմիածին» ամսագիր, թ. ԺԲ, «Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2011, էջ 113-118:
2. *Հարությունյան Խ. Ա.,* Հայկական ձեռագիր հիշատակարանը և լեզվական քննության զարգացման հեռանկարները, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը միջազգային գիտաժողով. նյութերի ժողովածու», Երևան, 2012, էջ 86-87:
3. *Հարությունյան Խ. Ա.,* 14-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների հոլովման համակարգը, «Հայերենագիտության հիմնահարցեր. զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012:
4. *Ղանալանյան Տ. Հ.,* Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրները, «Գլոբուս. Ազգային անվտանգություն», թ. 5, Երևան, 2011, էջ 53-63:
5. *Ղանալանյան Տ. Հ.,* Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքը, «Գլոբուս» վերլուծական հանդես, թ. 5, Երևան, 2012, էջ 29-36:

6. *Մալխասյան Մ. Ա.,* Կարսի մարզի բնակչությունը մարզը Ռուսական կայսրությանը միացվելու նախօրյակին (1829-1877թթ.), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, թ. Բ, Երևան, 2011, էջ 187-194:
7. *Մալխասյան Մ. Ա.,* ժողովրդագրական գործընթացները Երևանում 21-րդ դարի սկզբին, «Երևան-3» գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2012, էջ 74-81:
8. *Մալխասյան Մ. Ա.,* «ժողովրդագրական ձմեռը» եվրոպական պետություններում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, թ. Ա, Երևան, 2012:
9. *Մալխասյան Մ. Ա.,* Ինչպես գրել գիտական աշխատանք, «Երևանի համալսարան» պաշտոնաթերթ, «Բլանկիրատ» հրատ., Երևան, 2012, թ. 3, էջ 14:
10. *Տ. Արարատ քհն. Պողոսյան,* Նախանձախնդիր Հայրապետը, «Էջմիածին» ամսագիր, թ. ԺԱ, Էջմիածին, 2011, էջ 79-101:
11. *Տ. Արարատ քհն. Պողոսյան,* Սասո՜ւն, կարոտ եմ քզի, «Էջմիածին» ամսագիր, թ. Դ, Էջմիածին, 2012, էջ 83-87:
12. *Seyranyan S. S.,* The Byronic Hero in Oriental Tales (with special reference to Lord Byron's the Bride of Abydos, Lara and Parisina), «Աստղիկ» թարգմանչաց հանդես, թ. 22-23, Երևան, 2012, էջ 170-178:
13. *Seyranyan S. S.,* Non-Formal Education as a Significant Pillar in the International Framework of Education: Student's Approach, Избранные труды международной научной конференции "Образование, наука и экономика в вузах. Интеграция в международное образовательное пространство", Ереван, 2012, с. 401-405.

բ) Բնական գիտություններ

1. *Ալեքսանյան Գ. Փ.,* Կայուն զարգացման հայեցակարգի անհրաժեշտությունը դպրոցական կրթական համակարգում, «Բնագետ», հատուկ թողարկում, Համահայկական III կրթական գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 162-163:
2. *Սաստրյան Վ. Լ., Մալխասյան Մ. Ա.,* Օժտված երեխաների և օլիմպիականների հետ տարվող աշխատանքների հիմնական մոտեցումները, «Բնագետ», հատուկ թողարկում, Համահայկական III կրթական գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 3-4:
3. *Авагян А. Р., Алексанян Г. П.,* Гуманистичекие принципы оценки ресурсов недр., Сборник научних трудов (по материалам V научно-практической конференции студентов, аспирантов и молодых ученых с международным участием) "Геология в развивающемся мире", Пермь, 2012, с. 114-116.
4. *Айрапетян А. Т., Геворкян Р. Г.,* Геолого-геохимическиеособенности каменной соли аванского месторождения (Армения), "Геология в развивающемся мире", т. 1, Пермь, 2012, с. 66-68.
5. *Акопян Т., Мовсисян Ю.,* Дистрибютивные сверхтождества в полугруппах, Известия НАН Армении, Математика, т. 46, н. 6, Ереван, 2011, с. 31-40.
6. *Алексанян А. Г.,* Нелинейная аппроксимация по перенормированной тригонометрической системе, Известия НАН Армении, Математика, т. 47, н. 2, Ереван, 2012, с. 3-18.
7. *Алексанян Г. П.,* Становление геоэкологии как науки, Сборник научных трудов (по материалам V научно-практической конференции студентов, аспирантов и молодых ученых с международным участием) "Геология в развивающемся мире", Пермь, 2012, с. 106-108.
8. *Ахвердян Г. Г., Геворкян Р. Г.,* Закономерности распределения редких элементов в чибухлинском месторождении меди (Армения), "Геология в развивающемся мире", т. 1, Пермь, 2012, с. 68-70.
9. *Игитян А. А.,* Эффективность применемия геофизических методов при поисках сульфидного орудинения (на примере участка Лернашена, РА), Сборник материалов международной научно-практической конференции "Ступени Роста-2012", Кострома, 2012, с. 18-19.

10. *Карагулян Д. А.,* О характеризации множеств неограниченной расходимости рядов по системе Франклина, Известия НАН Армении, Математика, т. 47, н. 1, Ереван, 2012, с. 23-30.
11. *Мартиросян А., Керян К.,* Теорема единственности для рядов по системе Стромберга, Известия НАН Армении, Математика, Ереван, 2012.
12. *Саркисян А. Р., Шагинян Г. А.,* Объемные свойства обращенной мицеллярной системы АОТ-гепман-ДМСО-вода, Сборник материалов VI конференции молодых ученых "Теоретическая и экспериментальная химия жидкофазных систем", Иваново, 2011, с. 121.
13. *Aleksanyan H. G.,* Weighted greedy algorithm in $L_p(0,1)$ and C (0, 1) with respect to Franklin and trigonometric systems, Proceedings of International Conference "Harmonic Analysis and Approximations, V", Yerevan, 2011, p. 11-12.
14. *Aleksanyan H., Shahgholian H., SjΦlin P.,* Applications of Fourier Analysis in Homogenization and Boundary Layer, 2012, May, available at http://arxiv.org/pdf/1205.5210.pdf; submitted to Journal of European Mathematical Society.
15. *Aslanyan V., Movsisyan Yu.,* Hyperidentities of De Morgan algebras, "Logic Journal of the IGPL", Oxford University Press, Oxford, 2012.
16. *Karagulyan D. A.,* On the unbounded divergence sets of series in Franklin system, Proceedings of International Conference "Harmonic Analysis and Approximations, V", Yerevan, 2011, p. 55-56.
17. *Martirosyan A., Gevorkyan G.,* Paley function and A-integrability of series by general Franklin system, Proceedings of International Conference "Harmonic Analysis and Approximations, V", Yerevan, 2011, p. 41-42.
18. *Shakhbazyan G. A., Ghazaryan H. A.,* Diffraction of shear plane electro-elastic wave on the semi-infinite metallic layer in the piezoelectric semi-space, "Proceedings of YSU, Physical and Mathematical Sciences", N 1, Yerevan, 2012, p. 33-37.

Զեկուցումների թեզիսների ժողովածու

1. «Լեզուն որպես միջմշակութային հաղորդակցության միջոց» խորագրով միջբուհական ուսանողական գիտաժողովի թեզիսների ժողովածու (նվիրվում է ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի 20-ամյակին), ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 20 էջ (12 թեզիս):

Հարգանքով՝

ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ՝ **Մ. Մալխասյան**